ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Արմավիրի մարզ, Գ. Փարաքար, Նաիրի 42, Հեռ. 0231 6-00-42, 060-53-00-42

N 2477
09 նոյեմբեր 2022թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

2022 թվականի դեկտեմբերի 14-ին ժամը 14:30-ին ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի շենքում նախատեսվում է կազմակերպել ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Մերձավան գյուղում գտնվող՝ 04-065-0503-0230 կադաստրային ծածկագրով, 0.35 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամասի աճուրդի իրականացման գործընթացը:

Այսպիսով խնդրում ենք Ձեր միջնորդությունը սույն գրությանը կից ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքում համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի դասական աճուրդի վերաբերյալ հայտարարությունը ՀՀ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայքէջում 11/11/2022 թվականից տեղադրելու համար:

ՀԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

Կատարող՝ իրավ. բաժնի առաջատար մասնագետ
Արփինե Ավագյան
077 352570

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի դասական աճուրդ:

ԼՈՏ 1 – ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Մերձավան գյուղում գտնվող՝ 04-065-0503-0230 կադաստրային ծածկագրով, 0.35 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, այլ հողատեսք գործառնական նշանակության հողամաս՝ գյուղատնտեսական մթերքների արտադրության նպատակով:

Հողամասի նկատմամբ սահմանափակումներ՝ ներառյալ սերվիտուտներ չկան: Առկա է ճանապարհ: Շրջակա միջավայրի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումներ չկան: Աճուրդի ծածկագիրն է՝ ՀԱ-01-22:

Աճուրդի առարկայի մեկնարկային գին է սահմանվել 2.800.000 /երկու միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ՝ այցելելով ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարան, հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ Փարաքար համայնք, գ. Փարաքար, Նաիրի 42:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն՝ ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք:

Աճուրդի նախավճարի չափը կազմում է աճուրդի առարկայի մեկնարկային գնի 50 տոկոսը, քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Աճուրդում հաղթող կճանաչվի առավելագույն գին առաջարկողը:

Աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարան /ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Փարաքար, Նաիրի 42, 1-ին հարկ, քաղաքաշինության և հողաշինության բաժին/:

Աճուրդը կայանալու է 2022 թվականի դեկտեմբերի 14-ին ժամը 14:30-ին, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքպետարանի շենքում: Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 9-ը, ժամը 18:00-ն:

Հեռ.՝ 023-16-00-42:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**